Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ,, ՀՀ Արագածոտնի մարզի Վարդաբլուրի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոց ,, ՊՈԱԿ-ի գերմաներեն /16 դասաժամ /, մաթեմատիկա / 11 դասաժամ / և դասվարի / 20 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել ՝

1. Դիմում/ձև 1/ , մեկ լուսանկար 3x4 չափի
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ,
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. ,, Հանրակրթության մասին,, ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույքի պատճենը /առկայության դեպքում/ ,
5. Ինքնակենսագրություն /ձև 5/,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույք,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
10. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).
11. «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ.
12. «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադաձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են են 2024 թվականի հոկտեմբերի 28-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 8-ը ներառյալ , ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00 –ը , բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի նոյեմբերի 14-ին՝ ժամը 14:00-ին , ՀՀ Արագածոտնի մարզի Վարդաբլուրի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 00-17-36 հեռախոսահամարով